ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ

2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15 –Ի ՆԻՍՏՈՒՄ
ԸՆԴՈՒՆՎԱԾ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն Ե Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2015թ. N 15-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Հաստատել Ջերմուկի համայնքի ավագանու 2015 թվականի հուլիսի 15-ի նիստի հետևյալ ***օ ր ա կ ա ր գ ը.***

1.1. Ջերմուկի քաղաքային համայնքի սեփականությունը համարվող Շահումյան փողոցի N 32/4 հասցեում գտնվող հատուկ պահպանվող տարածքների նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և Ջերմուկ քաղաքի գլխավոր հատակագծին համապատասխանեցնելու մասին.

զեկ. քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան

1.2 Ջերմուկի քաղաքային համայնքի սեփականությունը համարվող Ջիվանու փողոցի վրա գտնվող հողամասը օտարելու համաձայնություն տալու, աճուրդային եղանակով վաճառքի մեկնարկային գինը և պայմանները հաստատելու մասին.

զեկ. քաղաքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-ճարտարապետ Ա. Գառնիկյան

1.3. Ջերմուկի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 30-ի N 51-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին

զեկ. քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Գ. Թադևոսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի			
Արսենյան Արմինե Արագեղեցիկի			
Բագրատյան Արտակ Կառլենի			

Խանամիրյան Բագրատ Սենիկի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			
Հովակիմյան Հարություն Հայրիկի			
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի	բացակա		
Ստեփանյան Վիգեն Արշակի	բացակա		

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...7... դեմ-...0... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2015 հուլիսի 15
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2015թ. N 16-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 32/4 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14.3 հոդվածի 9-րդ և 12-րդ կետերով և հիմք ընդունելով Ջերմուկի համայնքի ավագանու ս/թ հունվարի 16-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքայի համայնքի(բնակավայրի) գլխավոր հատակագիծը հաստատելու մասին (ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի N 40-Ն որոշմամբ հաստատված ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի փոփոխություն)» N 8-Ն որոշումը՝ ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկի քաղաքային համայնքի սեփականությունը համարվող Շահումյան փողոցի N 32/4 հասցեում գտնվող 1500 քմ մակերեսով հողամասի, նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների, գործառնական նշանակությունը՝ առողջարարական նպատակներով նախատեսված, նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի նշանակության՝ խառը կառուցապատման՝ համապատասխանեցնելով քաղաքի գլխավոր հատակագծին:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի			
Արսենյան Արմինե Արագեղեցիկի			

Բագրատյան Արտակ Կառլենի	բացակա		
Խանամիրյան Բագրատ Սենիկի	բացակա		
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			
Հովակիմյան Հարություն Հայրիկի			
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի	բացակա		
Ստեփանյան Վիգեն Արշակի	բացակա		

Որոշումն ընդունված է՝ կողմ- ....7.... դեմ-....0.... ձեռնպահ- ..0..

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2015 հուլիսի 15
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2015թ. N 17-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՋԻՎԱՆՈՒ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՎԱՃԱՌՔԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի հիման վրա, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի «գ» ենթակետին և 22-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Համաձայնվել Ջերմուկի համայնքի սեփականություն համարվող Ջիվանու փողոցի վրա գտնվող 3,02289 հա մակերեսով, 10-002-0011 կադաստրային ծածկագրով հողամասը, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, աճուրդով օտարելու մասին Ջերմուկի համայնքի ղեկավարի առաջարկությանը: Հողամասի մեկնարկային գինը սահմանել 1250 դրամ 1 քմ համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի			
Արսենյան Արմինե Արագեղեցիկի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			
Հովակիմյան Հարություն Հայրիկի			

Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի	բացակա		
Ստեփանյան Վիգեն Արշակի	բացակա		

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...6... դեմ-...1... ձեռնպահ- ...0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2015 հուլիսի 15
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
Ա Վ Ա Գ Ա Ն Ի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հուլիսի 2015թ. N 18-Ն

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 51-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան ավագանին **ո ր ո շ ու մ է՝**

1. Ջերմուկի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի քաղաքային համայնքի արվեստի դպրոցներում ուսման վարձերի և նախադպրոցական ու մարզական հիմնարկներում ծնողական վճարների 2015 թվականի ամսական դրույքաչափերը և համայնքի ճոպանուղու կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարի չափը սահմանելու մասին» N 51-Ն որոշման 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1 ենթակետով.
«*2.1.* Ջերմուկի համայնքի «Զատիկ» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրենին թույլատրել երեխաների ընդունելություն կատարելու նաև կարճաժամկետ ծրագրով՝ օրական 4,5-ժամյա տևողությամբ (ժամը 9.00-ից մինչև ժամը 13.30-ը), 2 անգամյա սնունդով: Ըստ այդմ՝ ծնողական վճարի դրույքաչափ սահմանել մեկ երեխայի հաշվով ամսական 6000 դրամ: Սույն որոշման երկրորդ կետում նշված զեղչը վերաբերում է նաև կարճաժամկետ ծրագրով մանկապարտեզ հաճախող երեխաներին:»

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և վերաբերում է ս/թ հուլիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Ավագանու անդամներ՝

ազգանուն, անուն	կողմ	դեմ	ձեռնպահ
Այվազյան Առուշան Մկրտիչի			
Արսենյան Արմինե Արագեղեցիկի			
Բագրատյան Արտակ Կառլենի			
Խանամիրյան Բագրատ Սենիկի			
Համբարձումյան Մխիթար Սամվելի			
Հովակիմյան Ազատ Հայրիկի			

Հովակիմյան Հարություն Հայրիկի			
Հովհաննիսյան Գևորգ Վարդանի			
Մկրտչյան Մայիս Վարանցովի			
Պողոսյան Արթուր Վահրամի	բացակա		
Ստեփանյան Վիգեն Արշակի	բացակա		

Որոշումն ընդունված է՝ կողմ- ...7... դեմ-...0... ձեռնպահ- ...0...

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2015 հուլիսի 15
Ջերմուկ

ՈՒ Ղ Ե Ր Զ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻՆ

ԸՆԴՈՒՆՎԱԾ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2010-2011 ուսումնական տարում Ջերմուկի թիվ 2 միջնակարգ դպրոցը, որը գտնվում է Ջերմուկ քաղաքի ձախափնյա հատվածում, ստացել է ավագ դպրոցի կարգավիճակ, իսկ թիվ 1 միջնակարգ դպրոցը, որը գտնվում է աջափնյա թաղամասում, և Կեչուտ գյուղի թիվ 3 միջնակարգ դպրոցը դարձել են հիմնական դպրոցներ: Այս փոփոխություններով պայմանավորված դպրոցների աշխատանքի ընթացքում ի հայտ են եկել լուրջ դժվարություններ, գրեթե անլուծելի խնդիրներ, որոնք հարուցել են մանկավարժական կոլեկտիվների, դպրոցահասակ երեխաների ու նրանց ծնողների խորը դժգոհությունն ու հիասթափությունը: Այսպես.

1. Ջերմուկը բարձրլեռնային բնակավայր է՝առանձնահատուկ կլիմայով և ռելիեֆով: Քաղաքի աջափնյա և ձախափնյա թաղամասերը գտնվում են միմյանցից 4 կմ հեռավորության վրա, իսկ Կեչուտ գյուղը՝ Ձախափնյակից հեռու է 3 կմ-ով: Երեք դպրոցներ հաճախող երեխաների տեղափոխումը հնարավոր է միայն տրանսպորտային միջոցներով, քանի որ առավել խիտ բնակեցված է ձախափնյա թաղամասը, և մինչև 15 տարեկան երկու հարյուրից ավելի երեխաներ այլընտրանք չունեն, քան հաճախելու կամ թիվ 1, կամ թիվ 3 հիմնական դպրոցները: Ուսումնական տարվա ինն ամիսներից հինգը ցրտաշունչ և ձյան առատ տեղումներով ձմեռ է: Հաճախ խաթարվում է տրանսպորտի աշխատանքը՝ կազմալուծելով դպրոցներում նորմալ դասապրոցեսը: Երեխաների ամենօրյա զանգվածային տեղափոխումները սառցակալած ճանապարհներով վտանգավոր է և ռիսկային:

2. Ջերմուկի ավագ դպրոցի շենքի նախագծային հզորությունը մի քանի անգամ գերազանցում է թիվ 1 հիմնական դպրոցի շենքային պայմաններին, մինչդեռ վերը նշված փոփոխությունների արդյունքում առաջացել է հետևյալ իրողությունը. ավագ դպրոցը, որը կարող է մինչև 900 աշակերտի կրթություն ապահովել, աշխատում է թերբեռնված (մեր հաշվարկներով 2015-2016 ուս.տարում ավագ դպրոց հաճախելու են 10-12-րդ դասարանների 55 աշակերտներ), իսկ թիվ 1 դպրոցում առկա աշակերտների թիվը արդեն 2015-2016 ուստարում կգերազանցի շենքի նախագծային հզորությամբ նախատեսված տեղերի թիվը, կառաջանա դասասենյակների պակաս , առաջիկա մեկ-երկու տարում ստիպված կլինի գործել երկհերթ, նույնիսկ եռահերթ ռեժիմով:

3. Կեչուտ գյուղը, չունենալով տեղական ինքնակառավարման մարմին՝ չի դադարում գյուղական բնակավայր լինելուց: Դա ամրագրված է <<Հայաստանի վարչատարածքային բաժանման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով: Հայաստանի Հանրապետությունում գյուղական դպրոցները պահպանել են իրենց նախկին կարգավիճակը և շարունակում են գործել որպես միջնակարգ դպրոցներ: Մինչդեռ Կեչուտ գյուղի դպրոցը դարձել է հիմնական դպրոց, գյուղի առանձին շնորհալի և հեռանկարային երեխաներ ավագ դպրոց հաճախելու դժվարությունների պատճառով կրթությունը շարունակելու հնարավորություն չեն ունենում, արհեստական դժվարությունների պատճառով ընդհատվում է նրանց հեռանկարային կրթությունը:

4. Վերը շարադրվածի արդյունքում գրեթե զրոյական արդյունք են ստանում այն տրանսպորտային ծախսերը, որոնք հատկացվում է պետական բյուջեից աշակերտների տեղափոխման համար:

Պարոն մարզպետ, խնդրում ենք քննարկել Ջերմուկի համայնքում գործող դպրոցների կարգավիճակների հարցը և դրանց գործունեության ավելի արդյունավետ տարբերակ գտնել. Ջերմուկի ավագանին առաջարկում է համայնքի դպրոցների կարգավիճակային հետևյալ փոփոխությունները. նպատակահարմար է, որ ավագ դպրոցին տրվի կրթահամալիրի կարգավիճակ, թիվ 3 հիմնական դպրոցը դառնա միջնակարգ, իսկ թիվ 1-ը մնա որպես հիմնական դպրոց:

Հարգանքով՝

Ջերմուկի համայնքի ավագանու անդամներ

Այվազյան Առուշան Մկրտիչի

Արսենյան Արմինե Արագեղեցիկի

Բաղրատյան Արտակ Կառլենի

Խանամիրյան Բագրատ Սենիկի

Համբարձումյան Մխիթար Սամվելի

Հովակիմյան Ազատ Հայրիկի

Հովակիմյան Հարություն Հայրիկի

Հովհաննիսյան Գևորգ Վարդանի

Մկրտչյան Մայիս Վարանցովի

Պողոսյան Արթուր Վահրամի

Ստեփանյան Վիգեն Արշակի

2015 հուլիսի 15
Ջերմուկ